

Նկարչի կեանքից յիշողութիւններ. Գ. ԲԱՇԽՆՋԱ-
ՂԵԱՆԻ Ս. Պ. Բուրգ 1903

Անցեալ տարի մեր տաղանդաւոր նկարիչ Բաշինջաղեանը հրատարակեց մի փոքրիկ գրքոյկ իւր յիշողութիւններից: Բանաստեղծ նկարիչը իւր ծանապարհորդական յիշողութիւնները ժամանակ առ ժամանակ տպագրում էր պարբերական հրատարակութեանց մէջ, բայց հպուռագիւտ երեւոյցով այդ պատկերները համարեա աննկատելի էին անցնում ընթերցողի համար, իսկ մի քանի պատկերների միատեղ ամփոփած ընթերցանութիւնը բոլորովին այլ տպաւորութիւն է անում և առիթ է տալիս մշտածելու նրանց մասին: Մինչև այժմ Բաշինջաղեանի գրական պատկերների վրայ շատ քիչ ուշադրութիւն են դարձրել:

Թերթերով այս փոքրիկ գրքոյկը սակայն, մենք այնքան զեղեցիկ բանաստեղծական կտորներ գտանք նրա մէջ, որ միանգամայն կարեաւոր ենք համարում ծանօթացնել այս գրքոյկի հետ հայ ընթերցողին: Առաջին պատկերը բանաստեղծ նկարիչը առել է իւր հայրենի Սղնախի գաւառի բնութիւնից: Սըղնախի և Ալազանի դաշտավայրը, Թամար թագուհու ամրոցի աւերակները ծարակի-Սելոյի մօտերքում, Վրաստանի զեղչկական տնակները և այգիները—ահա առաջին պատկերի նիւթը: Երկրորդ նկարը պատմական լիճը, երրորդը ոչ պակաս նշանաւոր ռազմավիրական ծանապարհը, ապա Արարատեան դաշտը և Արագածը, Անին իւր աւերակներով և վերջապէս դարձեալ Վովկասեան լեռները իւր անտառներով, Բնութեան սիրահար նկարիչը իւր գրականական պատկերների մէջ ևս բնութիւն է փնտռում ու նկարագրում և կատարում է նոյնպէս պարզ, կենդանի և բանաստեղծօրէն, որպէս և իւր պատկերներում: Ուրախալի է դիտել Բաշինջաղեանի և նկարագրական հրատարակութիւնը և պատմութեան բնական կենդանի ոճը: Ահա ձեզ Բաշինջաղեանի նկարագրութեան մի սիրուն օրինակ: Հեղինակը նկարագրում է Սեանայ լիճը գերեկուայ անդորութիւնից յետոյ, լուսնի ծագման ժամանակ, երբ եղանակը փոխում է:

«Անցնում է ժամանակ. եղանակը փոխում է, բարձրանում է հողմը և օրնութեան այս սրբազան անդորութիւնը խանդարւում: «Մի՞թա՞ն սիրահար՝ ըրի դեմքից պոկւում է քօղը և մի կողմը շարտւում: Նա կարծես կերպարանափոխւել է, քնքշացել, մաքրուել և արծաթապատել իրան: Հողմը փչում է ծովակէլ վրայ և յանկարծակի հարուած տալիս: Նա քաղցր քնից արթնանալով՝ ազեւ կամոյց շարժւում է տեղից, յետոյ խուռ հառաչում, ընկնում այս ու այն սկզբը և կատաղաբար փրփուրներ արձակում կրճերի միջից: Շըւշըւոցով մօտենում է ժայռերին, դարձեալ յետ քաշվում, նորից մօտենում, բարձրանում և գանգուրներով զարգարուած ճակատով մարտնչում նրանց հետ: Ճակատամարտն անընդհատ շարունակւում է, ալիքներն անթիւ անգամ վարդ ու փշուր եղած յետ են վազում: Նրանց կտաղութիւնը սաստկանում է:

«Հաղաբաւոր ալիքներ իրանց գլուխը բարձրացրած՝ խուռ խմբի ետե-
ԼՈՒՄԵՏ

«Էդ մանչալով նորից յարձակում էին ցանկանալով պատառել իրանց ճնշող
 յժայռի կուրծքը, ուստի ճիշդ են թափում, բայց զգալով հսկայի անվեհերու-
 թիւնը՝ յետ են ջաշում ամօթով: Իսկ ժայռն իր թըջած փեշերով նայում է
 դարձրութիւնից ներդաժմաբար և ժպտում նրանց անմտութեան վրայ: Լուս-
 նի դեմը, որ մի ժամ առաջ պայծառ երևում էր անշարժ ջրի մէջ, այժմ բիւ-
 դաւոր մանր կտորների է փոխուել և իր փշրանքները տարածել ծովակի մի
 որոշ մակերևոյթի վրայ: Ալիւնները շեն կարողանում հանգիստ դառնել, նրանք
 դարձրանում են, իջնում՝ ճնշում իրար և դարձեալ յիշելով անհրաժեշտ պա-
 տերազմը, ձեռք ձեռքի տուած մտենում են ժայռին, հաւարում իրանց աճ-
 ողջ նշով, փրփում, ուռչում, բայց իզուր, անյաղժ հսկայի ոտների տակ միշտ
 յ յաղթուած են հանգիստանում: Լուսինը տեսնելով ծովի կատաղութիւնը
 յատուճանաբար բարձրանում է երկնակամարի վրայ ազնուկ շլեւելու համար
 նրան շրջապատել են մարուր ամպերը, ինչպէս ընկերուհիները հարանաջուկն
 և իրանց մէջ բարբոսի մի ծիածան կազմելով փայփայում են նրան: Երկինքը
 թափանցիկ է և սև, ուստի լուսնեակը իր սքանկեղծ կայծերով
 դառնի պայծառ և նկատուած խաւար փօնի վրայ, ինչպէս գեղեցկու-
 ղ հին սպառազանքի միջից: Գեղամայ կղզին մուսլ ու գաժան կերպարանքով
 շնջում է ջրի վերայ: Ոչ լուսնի դրաւիշ դեմը, ոչ աստղերի ժպիտը և ոչ էլ
 այնեկոծուած ծովի աղաղակը չեն ազդում նրա վրայ: Վանքերի դժբեկները ի-
 նրանց խաչակիր դադաթներով սև գոյներով նկարուած են ծովակի լուսաւո-
 դուած մասի վրայ: Լճի զայրացած ալիւնները, շրջապատած կղզու շուրս կող-
 ղմէ՝ երբեմն աղբրանքով դիմում են նրա օգնութեան, երբեմն սպառնալիք-
 ներ են ուղղում. բայց յար է նրա սիրտը և իրիշը մեռած.— Եւ անգիշու-
 թեամբ յետ է մղում նրանց: Գուհաճառուած յետ են դառնում և հանգիստ
 լով ընկերներին, դրկախառնում են իրար և ընդհանուր յոգներով աղաղակ
 դարձրացնում, գլուխ դնել են զարկում և փրփուրը մինչև երկինք բարձրաց-
 րում, բայց, առաջ, երկինքն էլ խուլ է և համբոյ:

Բնութեան նման գեղեցիկ նկարագրութիւններով լիքն է
 այս փոքրիկ գրքոյկը: Այապանի դաշտի պատկերները, Արա-
 գածի լանջերը, Անիի աւերակները, ճիւղաւորի անտառը—բոլոր
 հրաշալի լեզուով և բանաստեղծական վրձինով են գծագրուած
 հեղինակից (եր. 11, 17, 75, 76, և այլն):

Բայց միմիայն բնութեան պատկերաւոր նկարագիրները
 չեն կազմում գրքոյկի արժանաւորութիւնը, այլ և հեղինակի
 ընդունակութիւնը կենդանի և գեղեցիկ լեզուով պատմելու
 ձևը: Ցեղ տեղ նշմարուած է շատ քնքշւ հումոր, որ ընթերցա-
 նութիւնը դարձնում է հաճելի: Երգիծաբանական այս տարրը
 միանգամայն գրականական տաղանդի նշան է: Ահա մի տեղ
 նկարիչը կամենում է նկարել մի վրացի գիւղացու սնակ,
 բայց վրացին դադանակը վերցրած գալիս է նկարչին հեռացնե-
 լու, որովհետև կործում է թէ նկարիչը նրա տունը վեր գրե-
 լու է եկել (իբրեւ սուղեքնի պրիստաւ) (եր 13): Մի ուրիշ
 տեղ նկարիչը քսան կոպէկ է խոստանում մի վրացու որ կէս
 ժամ հանդիստ նստի և թոյլ տայ իրան նկարելու, բայց վրա-
 ցին քսան կոպէկի վրայ խնդրում է աւելացնել և շէրթի տա-

քանից արաղի» (մի ըստակ էլ օղի)։ Միւս օրը սակայն վերացի Քիտօն հայհոյանքներով գալիս է նկարէի բնկարանը և իշոցներ է տալիս նրան։

Բանից դուրս է գալիս, որ Քիտոյին հաւատացրած են եղել, որ նկարիչը նրա պատկերը քաշել է իշխանութեան ներկայացնելու համար, որը եթէ հաւանի պատկերը-Քիտոյին զինւոր կրտսնեն, իսկ եթէ ոչ՝ հրացան կարծակեն պատկերի վերայ և Քիտօն էլ որտեղ և լինի կըմենի։

Այսպիսով Յ. Բաշինջաղեանը ոչ միայն տաղանդաւոր ներկարիչ է այլ և զբաղանական նկարագրողի լաւ շնորհք ունի և ցանկալի է, որ նա չըդադարէ գրելուց, որովհետեւ հայրենի բնութեան և կեանքի գեղեցիկ պատկերներ կարող է տեսնողագործել։

ԳԱՐ. ԵՆԴ.

ՎԱՀԱՆ ԹԱԽԱՐԱԷԴԵԱՆ. Բանաստեղծութիւններ. Տփլիս 1903

Մաքուր և գեղեցիկ հրատարակուած այս գրքովը արտաբերում լինում են բանաստեղծութիւններն է նմանում՝ փոքրիկ երեսներ, կարճ-կարճ տողեր, գեղեցիկ անուններ, ինչպէս «Սիրոյ նուագներ», «Մրմուռներ», «Նոր գարուն», և այլն։ Բայց դրանք, իմ կարծիքով, տպարանատիրոջ, սրբագրչի և մետրանպաժի ճաշակի և փորձառութեան մասին են խօսում, քան հեղինակի տաղանդի։ Վերջինս պէտք է փնտրել բանաստեղծութիւնների մէջ, սակայն բանաստեղծութիւններ չկան։ Կան ոտանաւորներ, որոնց մեծամասնութիւնը առանց տաղաչափութեան կանոնների են գրուած, ուստի և պրոզայի տպաւորութիւն են թողնում. օրինակ՝

Հուրջս գարուն է և յստակ

Լսում է սոխակի երգ,—

Միայն հոգիս է աւերակ,

Ուր երգ չէ հնչում երբէք։

Երկրորդ տողը փառաւոր պրոզայ է. էլ չեմ խօսում «յստակի» մասին, լերգ և երբէք» մասին և այլն։

Արձակ «ոտանաւոր» ի մի ուրիշ օրինակ՝

Այդպէս էլ ես, երբոր տեսայ

Չնաշխարհիկ քո աչեր,

Իսկոյն, սիրելիս, հասկացայ,

Որ դու պիտ լինիս իմ սէր...

Ես էլ չիսկոյն, սիրելիս, հասկացայ, որ դու բանաստեղծ չես։ Ինչ հարկ կ'ը պիտ լինի «մրմուռներ» և թոթովանքները հրապարակ հանել և այդպիսով նեղ տեղը դնել և չօր. Ս. Աւին որին որ նուիրուած են բոլոր ոտանաւորները, Մաւաւանդ որ պիտ սէրը, որը ունեցել է հեղինակը դէպի օրիոր-